ԿԱՐԾԻՔ

Արմինե Արարատի Գաբրիելյանի «Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառութային-ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսի աշխատանքը նվիրված է Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենին: Այն բաղկացած է 185 էջ ընդգրկող տեքստային մասից՝ ներածությունից, երեք գլուխներից (համապատասխան ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից՝ 262 անուն, հապավումների, 4 քարտեզների և 64 աղյուսակների ցանկերից:

Խեցեղենը ամենամասսայական և հսկայական տեղեկատվություն պարունակող հնագիտական համալիրներից է, որի ուսումնասիրությունը բացառիկ նշանակություն ունի հին հասարակությունների պատմության և մշակույթի տարբեր հարցերի բացահայտման համար:

Ներածության մեջ ատենախոսը բարձրաձայնում է մի շարք կարևոր հիմնախնդիրներ, որոնց համատեքստում արծարծում է Տիգրանակերտի խեցեղենի տեղն ու դերը տվյալ ժամանակաշրջանի համար: Ատենախոսության ամենակարևոր արժեքը հեղինակի կողմից պեղումների ժամանակ հավաքած, մշակած նյութի ուսումնասիրությունն է, որտեղ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում բավականին մեծաքանակ նյութ: Փորձ է արվել համալիր ուսումնասիրության արդյունքում դասակարգել Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը, քննել և ուրվագծել Տիգրանակերտի, Արցախի և Ուտիքի՝ այլ տարածաշրջանների և երկրների հետ ունեցած կապերը և փոխառնչությունները:

Ատենախոսության առաջին գլուխը վերաբերում է Տիգրանակերտի անտիկ խեցեղենի պատրաստման տեխնոլոգիական գործընթացին և տեխնիկական հնարներին: Այստեղ հեղինակը քննում է բրուտագործական արտադրանքի գործընթացը՝ սկսած հումքի ընտրությունից մինչև անոթների մակերեսի

տեխնիկական մշակումը և թրծումը: Գլխի քննարկումից հեղինակը կատարում է հետևյալ եզրակացությունը, որ Տիգրանակերտի անտիկ խեցեղենը՝ պատրաստման գործընթացով և տեխնիկական բնութագրով, բազմաթիվ զուգահեռներ ունի Հայաստանի անտիկ բնակավայրերից և դամբարանային համալիրներից հայտնաբերված համաժամանակյա գտածոների հետ՝ դրանով իսկ հավաքածուն ներկայացնում է մշակութային ավելի մեծ ընդհանրության մի ինքնատիպ լոկալ խումբ:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Անտիկ խեցեղենի ժամանակագրական, գործառութային-ձևաբանական դասակարգումը»: Քննարկելով Տիգրանակերտի I և II մշակութային շերտերը հեղինակը հայտնաբերված խեցեղենի դիտարկումների արդյունքում փորձել է առանձնացնել համապատասխանաբար ժամանակագրական երկու խումբ՝ ուշ հելլենիստական (մ.թ.ա 1-ին - մ.թ. 1-ին դարեր) և ուշ անտիկ (մ. թ. 2-րդ – 3-րդ դարեր): Անտիկ խեցեղենի դասակարգման և մեթոդաբանական խնդիրներին անդրադառնալով առանձնացվում է Գ.Տիրացյանի և մյուսների կողմից առաջարկված մեթոդը, որի լրամշակմամբ առաջադրվել է անտիկ խեցեղենի համար հատուկ մշակված, աստիճանակարգված համակարգով գործառութային-ձևաբանական դասակարգման մոդել: Վերջինիս հիմքում փաստագրել է խեցանոթների դասակարգման հիմնական յոթ կատեգորիաների առանձնացումն ըստ կիրառական-գործառութային նշանակության: Դրանք իրենց հերթին, ըստ ձևաբանական հատկանիշների, ստորաբաժանվում են տեսակների, տիպերի և տարբերակների: Հատկանշական է, որ նման մեթոդի համար կարևոր է խեցեգործության մեջ ստանդարտացման ֆենոմենը, որը կապված է պետական արտադրահամալիրի հետ: Նման բնութագիր է ցույց տալիս ուրարտական խեցեղենը: Հեղինակի կողմից ուսումնասիրվող խեցեղեն հավաքածուի մեջ կարևոր նշանակություն ունեն ներմուծված գտածոները, որոնք լրացնում են մեր պատկերացումները խնդրո առարկայի տնտեսական, առևտրական, մշակութային լայն կապերի մասին:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Տիգրանակերտի անտիկ խեցեղենի գեղարվեստական հարդարման տեխնիկաները, զարդամոտիվները և հորինվածքները»: Այստեղ հեղինակը վերլուծում է խեցեղենի դեկորատիվ

հարդարանքի հնարավոր տեխնիկական կատարման ձևերը և առաջարկում դասակարգման տարբերակ: Ներկայացվում է խեցեղենի գունազարդումը, փորագրազարդումը, դրոշմազարդումը, ծեփումն ու վերադրումը, փայլեցումը: Գունազարդումը իրականում կատարվել է հիմնականում միագույն ներկերով, կան նաև սև և կարմիր գույնով նկարազարդված օրինակներ: Տիգրանակերտից հայտնաբերված գունազարդ խեցեղենը դասակարգվել է հետևյալ խմբերի՝ երկրաչափական, բուսական, ֆիգուրատիվ և այլ զարդամոտիվներ: Հայտնաբերված խեցեղենի մեջ փորագրման հարդարանքով գտածոները բավականին քիչ են հանդիպում, սակայն դրանք նույնպես բաժանվել են յոթ տեսակների՝ հորիզոնական համակենտրոն գծեր, համաչափ կրկնվող ուղղահայաց գծեր, զուգահեռ գոտիների մեջ շեղ դասավորված գծիկներ, կետային հարդարանք, եղունգազարդ, այլ (անորոշ կամ վարպետի նշաններ), ֆիգուրատիվ պատկերներ և տեսարաններ: Հեղինակի կողմից քննարկվում է նաև փոքրաքանակ, բայց յուրահատուկ խեցեղեն գտածոների խումբ, որը դրոշմազարդ է: Անոթների հարդարման տեխնիկա-տեխնոլոգիական բավականին բարդ միջոցներից է ծեփումն ու վերադրումը: Այս մեթոդով հիմնականում ձևավորվում էին անոթների իրանը, ծորակները, ինչպես նաև բռնակները: Դրանք մեծի մասամբ վերաբերում են ծիսական՝ պաշտամունքային խեցեղենին (ցլագլուխ, խոյի, այծի պատկերներով): Ուսումնասիրվող խեցեղենի մեջ հանդիպում են գտածոներ, որոնք կատարված են փայլեցման եղանակով, ինչը նաև դեկորատիվ նշանակություն ուներ:

Ատենախոսության եզրակացության մեջ հեղինակը հանգում է այն տեսակետին, որ անտիկ շրջանում Արցախ-Ուտիքում եղել է առևտրա-արհեստավորական և մշակութային կենտրոն ի դեմս Տիգրանակերտի, որտեղից մշակութային արժեքները փոխանցվել և տարածվել են դեպի հյուսիս և արևելք՝ ձևավորելով անտիկ մշակույթի ինքնատիպ անկյուն:

Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով և արժանի է բարձր գնահատանքի:

Աշխատանքում կան նաև որոշ տեխնիկական թերություններ, որոնք չեն նսեմացնում կատարված հսկայական ուսումնասիրության արժեքը: Նշենք մի քանի ցանկություններ.

1. Խեցեղենի ձևատիպաբանական վերակազմության խնդիրներին անդրադառնալիս հետագա աշխատանքներում ցանկալի է շեշտը դնել ամբողջական գտածոների վրա:
2. Որոշակի խնդիր է հանդիսանում ձևի և կիրառության համատեքստը, տերմինների հետ կապված (թաս, քրեղան և այլն):
3. Գունազարդ խեցեղենի ակունքները հասնում են մինչև նեոլիթ:
4. Ցանկալի է մշակել թեկուզ Տիգրանակերտի խեցեղենի օրինակով անոթների ցանկ, համապատասխան բացատրություններով:

Վերոնշյալ ցանկությունները չեն ստվերում աշխատանքի բարձր գիտականությունը: Այն համապատասխանում է ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ _____ Հ.Գ.Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ.Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ. _____ Լ.Ս.Հովսեփյան

12.03.2020